Կարգապահական գործ թիվ ԿԳ-25074

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՕՎՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարեն Խալաթյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան Կարինե Վոլոդյայի Օվչյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1113), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Նազիկ Սեդրակյանը (այսուհետև՝ Դիմող), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (այսուհետև՝ Պալատ) հայտնել է, որ իր իրավունքների պաշտպանության նպատակով մոտ 1,5 տարի առաջ փաստաբան Կարինե Օվչյանի (այսուհետև՝ Փաստաբան) հետ կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր:

Դիմողը հայտնել է, որ 27.05.2025թ. ժամը՝ 15:00-ին կայանալիք դատական նիստին Փաստաբանը չի ներկայացել:

Ըստ Դիմողի, Փաստաբանը հայտնել է, որ Կապան քաղաքից Գորիս հասնելու ճանապարհածախսը պետք է հատուցի Դիմողը, սակայն իրենց միջև նման պայմանավորվածություն չի եղել:

Թիվ ԿԳ-25074-2-Ա
29.10.2025թ.

Դիմողը նշել է, որ Փաստաբանը ծառայություններից հրաժարվելու դիմում է ներկայացրել դատարան և այդ պահից սկսած Փաստաբանը արգելափակել է իր հեռախոսահամարը:

Դիմողը հայտնել է, որ կատարել է իր բոլոր պայմանագրային պարտավորությունները և որևէ մտադրություն չի ունեցել Փաստաբանի ծառայություններից հրաժարվելու:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 19.08.2025թ. Դիմողին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը որևէ բացատրություն և (կամ) ապացույց չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Կարինե Օվչյանին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև՝ Օրենք) 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Նազիկ Սեդրակյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 05.06.2025թ. և 11.06.2025թ. ներկայացրած բացատրություններով հայտնել է, որ ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը՝ կնքելով ծառայությունների մատուցման պայմանագիր, որի օրինակը տրամադրվել է Դիմողին 2024թ. հունիսին:

Փաստաբանը հայտնել է, որ կնքված պայմանագրում չկա այնպիսի կետ, համաձայն որի ճանապարհածախսը մտնում է ծառայության արժեքի մեջ: Փաստաբանի և Դիմողի միջև առաջացել են տարաձայնություններ Կապան քաղաքից մինչև Գորիս քաղաք հասնելու ծախսերի հատուցման հարցի վերաբերյալ:

Փաստաբանը նշել է, որ դիմումում նշված ծառայություններից հրաժարվելու հանգամանքն իրականությանը չի համապատասխանում, քանի որ Փաստաբանը Դիմողին հայտնել է, որ ներկայացնելու է դիմում պաշտպանից հրաժարվելու վերաբերյալ, այլ ոչ թե ծառայություններից հրաժարվելու դիմում:

Ըստ Փաստաբանի, նման դիմում ներկայացնելու նպատակը եղել է իր բացակայությունը հարգելի դարձնել դատարանի համար, որպեսզի վերջինս չքննարկի խափանման միջոցի փոփոխման հարցը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 19.08.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5

հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 25.08.2025թ. բացատրությամբ հայտնել է, որ Դիմողին մշտապես ցուցաբերել է բարեխիղճ իրավական օգնություն, հիմնական և ընթացիկ հանձնարարությունները կատարել է հնարավորինս ողջամիտ ժամկետում և մշտապես տեղեկացրել է գործի ընթացքի մասին Դիմողին, ինչը հիմնավորվում է 01.09.2023-16.08.2025թթ ժամանակահատվածում առկա 93 ելքային զանգերով և նամակագրությունների սկրիններով:

Փաստաբանը հայտնել է, որ Դիմողի գործով որևէ դատական նիստ չի հետաձգվել:

Փաստաբանը հայտնել է, որ երբևէ միակողմանի չի լուծել Դիմողի հետ պայմանագիրը, ինչպես նաև չի հրաժարվել հանձնարարությունից:

Փաստաբանը նշել է, որ 27.05.2025թ. դատարան ներկայացված դիմումը Նազիկ Սեդրակյանի իրավունքների պաշտպանությունից հրաժարվելու մասին ուղղված է եղել վերջինիս շահերի պաշտպանությանը, որպեսզի նրա բացակայությունը հարգելի համարվի և չքննարկվի խափանման միջոցի հարցը: Փաստաբանն ընդունել է այն հանգամանքը, որ պարտավոր էր այդ ամենի մասին բացատրել Դիմողին:

Փաստաբանն ընդգծել է, որ Դիմողը հրաժարվել է փոխհատուցել ճանապարհածախսի գումարները, սակայն ոչ Դիմողը, ոչ էլ Փաստաբանը չեն հրաժարվել փաստաբանական ծառայությունների մատուցումից:

Ըստ Փաստաբանի, նա արգելափակել է Դիմողի հեռախոսահամարը, քանի որ վերջինիս հետ երկխոսությունը չէր ստացվում:

Փաստաբանը հայտնել է, որ հետագայում կայացած՝ 24.07.2025թ. և 13.08.2025թ. դատական նիստերին մասնակցել է:

Փաստաբանը 29.10.2025թ. ներկայացրած բացատրությամբ տեղեկացրել է կարգապահական նիստին ներկայանալու անհնարինության մասին, ինչպես նաև հայտնել է, որ մասնակցել է քրեական գործով կայացած նիստերին և ի հավաստումն ասածի՝ ներկայացրել է դատական նիստերի արձանագրությունները:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Փաստաբանների պալատի նախագահի 27.06.2025թ. թիվ 184-Ա/ԿԳ-25074 որոշմամբ փաստաբան Կարինե Վոլոդյայի Օվչյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 3.5.5, 3.6.1, 3.8.2 և 3.8.3 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

02.07.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Ծովինար Քուրքչյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 02.09.2025թ. կազմել է եզրակացություն:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 29.10.2025թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Կարինե Օվչյանը ստանձնել է Դիմող Նազիկ Սեդրակյանի իրավունքների պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է 23.05.2024թ. ծառայությունների մատուցման պայմանագրով* ***(այսուհետ՝ Պայմանագիր):***

2. Փաստաբանը պարտավորվել է ներկայացնել Դիմողի շահերը առաջին ատյանի դատարանում թիվ ՍԴ1/0087/01/24 քրեական գործի շրջանակներում: *Սույն փաստը հաստատվում է Պայմանագրի 1-ին կետով:*

3. Փաստաբան Կարինե Օվչյանը դատական նիստին չներկայանալու պատճառով դիմում է ներկայացրել դատարան, որով հայտնել է, որ իր վստահորդ Նազիկ Սեդրակյանը հրաժարվել է Փաստաբանի պաշտպանությունից: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի ներկայացրած դիմումով, ինչպես նաև կողմերի բացատրությամբ:*

4. Փաստաբան Կարինե Օվչյանը չի ներկայացել թիվ ՍԴ1/0087/01/24 քրեական գործով 27.05.2025թ. ժամը 15:00 կայանալիք դատական նիստին: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

5. Փաստաբանը չի բացահայտել Դիմողին վերջինիս իրավունքների պաշտպանությունից հրաժարվելու մասին դատարան ներկայացրած դիմումի պատճառների վերաբերյալ: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

6. Փաստաբանը 01.09.2023-16.08.2025թթ ժամանակահատվածում 93 անգամ

զանգահարել է Դիմողին պատկանող 094173714 հեռախոսահամարին: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի հեռախոսազանգերի վերածանման քաղվածքից:*

7. Փաստաբանն արգելափակել է Դիմողի հեռախոսահամարը: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

6. <u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Կարինե Օվչյանը փաստաբան է հանդիսանում 16.10.2010 թվականից, և 2020-2025թթ ընկած ժամանակահատվածում ունեցել է 1 կարգապահական տույժ (տույժը մարված է):

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Կարինե Օվչյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5, 3.6.1, 3.8.2 և 3.8.3 ենթակետերի խախտման համար:

7.1 Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար

անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածի հաշվառմամբ, փաստաբանի վարքագծի կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից, բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Ավելին, տրված հանձնարարության շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Վկայակոչած կանոնների վերլուծությունից հետևում է նաև, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Այդ կապակցությամբ, փաստաբանի համար վստահորդի իրավունքները և օրինական շահերը բարեխիղճ և ժամանակին պաշտպանելուց բացի, սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք նա պետք է իրականացնի հանձնարարության կատարման ընթացքում՝ մասնավորապես, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Փաստաբանը 23.05.2024թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը թիվ ՍԴ1/0087/01/24 քրեական գործի շրջանակներում:

Հիշատակված գործով Փաստաբանը Դիմողի շահերի պաշտպանության համար չի կատարել անհրաժեշտ գործողությունները վերջինիս իրավունքների արդյունավետ պաշտպանության համար: Մասնավորապես, Կարինե Օվչյանը չի մասնակցել քրեական

գործով՝ 27.05.2025թ. ժամը 15:00 նշանակված դատական նիստին և դատարանին հայտնել է, որ իր վստահորդ Նազիկ Սեդրակյանը հրաժարվել է Փաստաբանի պաշտպանությունից:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ ցանկացած դեպքում հանձնարարության բարեխիղճ կատարման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը փոխկապակցված է դրանց արդյունավետության հետ: Ընդ որում, հաշվի առնելով փաստաբանի իրավապաշտպան առաքելությունը և համապատասխան իրավունքի իրացման անհրաժեշտ և օգտավետ գործողությունների կատարման կարևորությունը՝ փաստաբանն՝ իր վստահորդին ցուցաբերելով բարեխիղճ իրավաբանական օգնություն պարտավոր է ոչ միայն կազմել և դատարան ներկայացնել անհրաժեշտ դատավարական փաստաթղթերը, այլ նաև **անձամբ մասնակցի նշանակված բոլոր դատական նիստերին**: Ավելին, Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ դատական նիստին չմասնակցելը ինքնին չի կարող համարվել Օրենքի և Կանոնագրքի պահանջների հակասող վարքագիծ միայն այն դեպքում, երբ դատական նիստին չմասնակցելը պայմանավորված է Փաստաբանից անկախ հանգամանքներով:

Սույն պարագայում, Փաստաբանի կողմից դատական նիստին չմասնակցելու մտադրության վերաբերյալ տեղեկացված չի եղել անգամ Դիմողը, ինչը Փաստաբանն ընդունել է: Հարկ է նշել, որ Պայմանագրի առարկան կայանում է դատարանում Դիմողի իրավունքները և շահերը ներկայացնելու մեջ, ուստի՝ Փաստաբանի դատական նիստին չմասնակցելը և դա վստահորդի հետ չհամաձայնեցնելը տրամաբանորեն հակասում է նաև նրա պայմանագրային պարտավորություններին:

Այս համատեքստում, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը, առաջնորդվելով վստահորդի իրավունքների արդյունավետ պաշտպանությունից, պետք է ջանքեր գործադրեր և չսահմանափակվեր միայն անհրաժեշտ դատավարական փաստաթղթերի կազմման և դատարան ներկայացման գործողություններով, այլ **պարտավոր էր ներկայանալ թիվ ՍԴ1/0087/01/24 քրեական գործով 27.05.2025թ. ժամը 15:00 նշանակված դատական նիստին:**

Այս առումով, Հանձնաժողովի գնահատմամբ, Փաստաբանի դրսևորած այս վարքագիծը առհասարակ չի բխել Դիմողի նպաստավոր շահերից և իրավունքների արդյունավետ պաշտպանությունից, անկախ Փաստաբանի պնդումից առ այն, որ Դիմողը չի հատուցել ճանապարհածախսը:

Վերոգրյալը հաշվի առնելով, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանն իր վստահորդի շահերը ներկայացնելիս թույլ է տվել այնպիսի խախտումներ, որոնք չեն տեղավորվում Օրենքով և Կանոնագրքով սահմանված փաստաբանի բարեխիղճ իրավական օգնություն ցուցաբերելու և հանձնարարության կատարման ընթացքի վերաբերյալ վստահորդին կանոնավորապես տեղեկացնելու ողջամիտ սահմաններում:

Ինչ վերաբերում է Փաստաբանի կողմից Դիմողի զանգերին չպատասխանելու հանգամանքին, հարկ է նշել, որ Փաստաբանը 05.06.2025թ. ներկայացրած բացատրությամբ փաստացի ընդունել է, որ կողմերի միջև կոնստրուկտիվ երկխոսություն չի ստացվել և այդ պատճառով Դիմողի համարը Փաստաբանն արգելափակել է:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովն անընդունելի է համարում Փաստաբանի դրսևորած վարքագիծը, քանի որ բոլոր դեպքերում, անկախ կողմերի միջև ձևավորված անախորժ հարաբերություններից, Փաստաբանն իրավունք չունի ոչ միայն իր վստահորդին անտեղյակ պահելու հանձնարարությունից, այլ նաև փաստաբանին արգելափակել վստահորդի համարը՝ զրկելով վերջինիս առհասարակ իր ներկայացուցչի հետ կապ ունենալու հնարավորությունից:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրություններն ու ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները**:

7.2. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 3.8.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը, եթե օրենքը չի արգելում և այլ բան նախատեսված չէ պայմանագրով, իրավունք ունի հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հետևյալ հիմքերով՝*

1) վստահորդը փաստաբանի պարզաբանումներին հակառակ կատարում է գործողություններ կապված հանձնարարության հետ, որոնք օրենքով արգելված են, կամ վստահորդի հանձնարարությունները կարող են հանգեցնել փաստաբանի կողմից ՀՀ օրենսդրության կամ Կանոնագրքի խախտմանը.

2) վստահորդը պնդում է ակնկալվող արդյունքի ձեռքբերումը, որը օբյեկտիվորեն դարձել է անհնար՝ նոր ի հայտ եկած հանգամանքների կամ փաստերի բերումով,

3) վստահորդը թույլ է տալիս իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտումներ,

4) հանձնարարության պատշաճ կատարումը անհնար է դառնում վստահորդի կողմից փաստաբանի խորհուրդներին հակառակ գործողություններ կատարելու հետևանքով,

5) վստահորդը կատարում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը անվանարկող գործողություններ,

6) վստահորդը հրաժարվում է կատարել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված վճարումները:

Կանոնագրքի 3.8.3-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու դեպքում փաստաբանը պարտավոր է բացատրել վստահորդին իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից հրաժարվելու պատճառները և զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնասել վստահորդի շահերին: Փաստաբանն իրավունք չունի թողնել գործը այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում վստահորդը կարող է հայտնվել անելանելի դրության մեջ և ժամանակին չստանալ այլ իրավական օգնություն(...):*

Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը հստակ սահմանում է իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագիրը միակողմանի, փաստաբանի կողմից լուծման հիմքերը: Այլ կերպ ասած, փաստաբանը, ով հանդիսանում է հատուկ սուբյեկտ՝ օժտված իրավապաշտպան առաքելությամբ, իրավունք չունի ցանկացած պահին լուծելու իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագիրը, թողնելով վստահորդին անելանելի վիճակում:

Վերոգրյալից նաև հետևում է, որ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին բացատրել հրաժարման պատճառները, ինչպես նաև չկատարել այնպիսի գործողություններ, որոնք կարող են վնասել վստահորդի շահերին:

Տվյալ պարագայում, անկախ նրանից, թե ինչ նպատակ է հետապնդել Փաստաբանի կողմից պաշտպանից հրաժարման դիմումի ներկայացնելը, վերջինս նմանատիպ դիմում ներկայացնելուց պետք է ունենար Կանոնագրքով սահմանված՝ ծառայություններից հրաժարման հիմքերից որևէ մեկը, որը սույն պարագայում չի եղել:

Փաստաբանը բազմիցս արտահայտել է այն դիրքորոշումը, որ 27.05.2025թ. դատարան ներկայացրած խնդրո առարկա դիմումի սկանավորած տարբերակն ուղարկել է Դիմողին:

Հանձնաժողովն արձանագրում է, որ պաշտպանից հրաժարման դիմումը Դիմողին ուղարկելն ինքնին չի կարող դիտարկվել որպես իրավունքների պաշտպանությունից հրաժարման պատճառների վերաբերյալ պատշաճ բացահայտում, առավել ևս այն դեպքում, երբ Փաստաբանն ինքն է ընդունում, որ արգելափակել է Դիմողի համարը: Հատկանշական է, որ Փաստաբանը գիտակցել է այն մասին, որ նշված տեղեկության բացահայտումն եղել է իր պարտականությունը:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Կարինե Օսկյանը 27.05.2025թ. դրությամբ չի բացահայտել Դիմողին վերջինիս իրավունքների պաշտպանությունից հրաժարվելու մասին դատարան ներկայացրած դիմումի

պատճառների վերաբերյալ, ինչը հիմք է հանդիսացել Դիմողի կողմից սույն կարգապահական վարույթի հարուցման առիթը:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը: Հաշվի առնելով այն, որ Փաստաբանը պետք է գիտակցեր, որ իր գործողություններից ու անգործությունից ուղղակիորեն կախված է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանության արդյունավետ ապահովումը, որպիսի պայմաններում էլ պետք է կանխատեսեր իր վարքագծի հնարավոր հետևանքները, առնվազն ձեռնարկելով ողջամիտ ջանքեր Դիմողի շահերը լավագույնս ներկայացնելու համար, որը պետք է իրականացվեր թիվ ՍԴ1/0087/01/24 քրեական գործով դատական նիստերին մասնակցելու միջոցով: Ավելին՝ այն դեպքում, երբ Փաստաբանը որոշել էր հրաժարվել Դիմողի իրավունքների պաշտպանությունից, նա պարտավոր էր վերջինիս բացահայտել հրաժարման պատճառների վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով,

Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Կարինե Վոլոդյայի Օվչյանի (արտոնագիր՝ թիվ 1113) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5, 3.6.1, 3.8.2 և 3.8.3 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ Տաթևիկ Շալջյան

Թիվ ԿԳ-25074-2-Ա
29 հոկտեմբերի 2025թ.
ք.Երևան